

ԽՕՍՈՂ ՍԵՎԱՆ

(ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՖԱՆՏԱՍԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

«Զղայիններին արգելում է ընթերցումը»

I

Ժամը տասին սկսեցին գալ հրաւիրուածները։ Նորատարուն դիմաւորելու համար պիտի ալդպէս ուշ գալին, կէս գիշերին սեղան նստէին և մինչև լուս զսւարճանալին։

Սրահը շքեղապէս կահաւորած էր։ Օճոռքից իջնող լամպը աղօտ լուս էր սփռում, բայց հնոցի մէջ վառուող մեծ կրակը ճարճատում էր և կարմրցնում ամեն կողմ գրուած տրօպիքական ծաղիկները։ Դախ կողմի կիսաբաց դռնից երևում էր պալճառ լուսաւորուած մեծ սեղանատունը, ուր ճառաներ և աղախիններ զբազուած էին սեղանը ծանրաբեռնելով։ Աջ կողմի գուռը հանում էր դէպի ննջարանը։ Կիսաբաց վարագուրից ներս էր գալիս այստեղ վառուող կանաչ մի լուս, որ դուրս էր հոսու մ չինական լապտերից։

Տանտէրն ու տանտէկինը հագնուած—մէկը սև, միւսը երկնագոյն կապոյտ, ժպիտը դէմքերին, դիմաւորեցին հիւրերին։

Առաջին եկողները երկու պարոններ էին։ Մէկը հաշտարար դատաւորն էր—տան վաղեմի բարեկամը, իսկ միւսը տանտիկնոջ եղբայրը՝ մի լայտնի խաղամոլ, որ մտնելուն պէս կանաչ սեղանը վամպի տակ քաշեց, երկու մոմ վառեց, խաղաթղթերը հանեց և հրաւիրեց միւսներին նստելու։

—Ես չը պիտի խաղամ ասաց քուրը—հսկելու եմ

Ընթրիքը պատրաստելու վրաբ:

— Սեղբակն ինչու չէ եկել. գոչեց դատաւորը —
խնդրել էի որ շուտ գար:

— Գուցէ քրոջը և հարսի հետ կը գալ:

Ո՛չ, նա առաջ պիտի գար:

Եւ երեք հոգի նստեցին սեղանի շուրջը: Բայց իս-
կոյն յետով՝ զանգահարեցին: Սեղբակն էր. լիսնամեալ
մի հաստափոր և կարճահասակ անձ, լերկ գանգով,
ճիւղաւորած մօրուքով և ճարպոտ աչքերով:

Այժմ չորս հոգի դարձան և սկսեցին թղթախաղը:

Գուեհիկ մի խօսակցութիւն բացուեց եղանակի
ցրտութեան մասին, լետոյ, ընդմիջաբար թէլ խմեցին,
բամբառեցին քիչ այս ու այն անձի, դատափետեցին
քաղաքային վարչութիւնը, իսկ տանտիկինը մի քանի
ըովէ կանգ առնելով նոցա մօտ, պատմեց իր դիմակա-
հանգէս գնալը և ալնտեղ տեղի ունեցող արկածները:

Ընդհանուր զուարթութեան և ծիծաղի մէջ՝ եկան
նաև Սեղբակի քոյրը, հարսը և եղբօր աղջիկները:

Քոյրը մի պառաւ աղջիկ էր: Թէկ մազերը ներկել
էր և դէմքը շպարել, սակայն պառաւութեան խորշսմները
և դէմքի ալլանդակուած գծերը ծածկել չէր լաջողուել:
Հարսը՝ կարճահասակ, համակրելի գծերով և ժպիտով
սակաւախօս կին էր, իսկ նրա աղջիկները զուարթ, ծի
ծաղկոտ և շարփուն երկու մանկամարդ կոլսեր էին,
որոնք մտնելուն պէս զուարթութիւնը աւելացրին ալդ
կիսախաւար և կահերով ծանրացած սրահում:

Սկսեցին նոր, եկող տարուայ մասին խօսել: Օ-
րիորդներից մէկը նուտքեց գաշնամուրի վրա, բերին
թէլ, այս ու այն նիւթի վրայ ճառեցին և Վառօն—
պառաւ աղջիկը — կարեար ու բարձը ձալնով հարցրեց
տանտիկնոց:

— Ուրիշ հերեր էլ կան գտլիք, Սօֆիա:

— Մի գերասան միայն. — Սարգսեանը:

— Այն, ճանաչում եմ... նրան էլ հրաւիրեցիք:

— Սարգսեամն... ասաց Սեղբակը տռանց խաղը
ընդհատելու — ինչ մարդ է դա. իզուր էք հրաւիրել. էլի
պիտի սկսի իր ալլանդակութիւնը:

— Ոչինչ. ծիծաղեց տանտէրը — քիչ մեզ կը ծիծա-

դեցնի. շուտիկ մարդ է... եւ յետոյ մենակ է և օտար ալստեղ... խեղճս եկաւ, կանչեցի որ նոր-տարուան գոնէ ընկերութիւնով դիմաւորի:

—Դէ, ի հարկէ. ասաց դատաւորը — լաւ էք արել...

Բայց խկապէս այնքան էլ ջուռիկ չէր ալդ դերա- սանը, որ մի քանի բոպէից յետոյ, խիստ կանոնաւոր հագնուած ու երեսը բոլորովին գերծած՝ ներս էր մտնում: Նիհար, դժգոյն և տխուր դէմքով մի երիտա- սարդ էր:

Պառաւ աղջիկը արհամարհու ու հպարտ՝ պարզեց նրան իր ձեռքը վոլտէրեան աթոռի միջից, և բարե- հաճեց հարցնել թէ ինչ նորութիւններ կացին: Սեդրա- կը ձեռքը ետ պարզեց և ալդպէս ընդունեց բարեւբ: Միալն տանտիկինն ու միւսներն էին որ սիրալիր ըն- դունելութիւն ցոյց տուին:

Ալդ բոլորը սակայն չը խանգարեց դերասանին: Նա շուտով հնարք գտաւ մինչև իսկ պառաւ աղջկան ծիծաղեցնելու և քիչ յետոյ արդէն սրան-նրան մի քա- նի խօսք ասելուց յետոյ, տեղաւորուեց հարսի կողքին և մեղմ ձախով մի բան էր պատմում նրան:

Ժամը շուտով տասնեւմէկը կը լինէր: Ամենքը թէ իմեցին, խմբերի բաժանուած խօսակցում էին և եր- բեմն է, լուռ՝ դիտում էին պարոնների խաղը:

—Այսպէս չի լինիլ. խօսեց վերջապէս: Վառօն — տիսուր ենք անցկացնում, պարոններ... կարծէք ինչ որ տիսուր բան է պատահելու... պէտք է ուրախ դիմա- ւորել նոր-տարուն, որ բաղտաւոր լինենք: Սեդրակ, թողէք խաղը...

— Ինչնու. խօսեց դատաւորը — մենք խօ ձեզ չենք խանգարում... Զուարճացէք. մինչև իսկ կը մասնակ- ցենք ձեզ...

— Նուագեցէք, երգէք... խրատեց Սեդրակը — և կամ դուք էլ խաղացէք...

Եւ ալդ միջոցին էր, որ աղօտ լուսով սրահի մէջ մի տարօրինակ դէպք պատահեց:

II

Հնոցի լուսը թէև քիչ իջել էր, բայց աւելի կարմրագոլն ընկել էր ճիշտ ննջարանի դռան բարակ վարագոլի վրայ: Լամպը գոլորշիով պատաժ՝ աւելի մեղմացրել էր լուսը:

Ցանկարծ, հազիւ թէ դատաւորը լռել էր, լսուեց սենեակի մէջ մի կծու սուլոց, յետոյ կարծես մի խիստ քամի անցաւ սրահից և մէկէն, կանաչ սեղանի վրայ դրուած երկու մոմերն էլ հանգան:

Խաղացողները զարմացած կանգ առին, պառաւ աղջիկը ոստնեց տեղից, տանտիկինը վազեց լուցկի ոռոնելու, իսկ ալդ միջոցին աղջիկներից մէկը սոսկման մի ճիչ տրձակեց և գոչեց.

— Նայեցէք, նայեցէք...

Հնոցի լոյսի տակ կարմրած դռան վարագոլը ուռել էր առագատի նման և արագ երերում էր:

— Ննջարանի լուսամուտը բացուել է... կռահեց տանտէրը մի վարկենի շուարումից յետոյ և վազեց դէպի այն կողմը:

Սակայն, երբ կամենում էր նեզս մտնել, վարագոլը ուժգին երելաց և այնպէս մարակեց նրա դէմքը, որ սա ահաբեկ՝ ետ քաշուեց: Երկու աղջիկները սոսկումով կը-պան իրենց մօրը: Պառաւ աղջիկը գունատ կանգնած՝ դողում էր. խաղացողները ոտքի ելան:

— Ե՛, բայց, ոչինչ չը կայ, մի վախենաք... ձայնեց դատաւորը:

Եւ ներս մտաւ ննջարանը, ուր նա մի ըոպէ մը-նալուց յետոյ գոչեց.

— Լուսամուտի դռնակն է բացուել և խիստ քամի է փշում:

— Այո՞. ասաց դերասանը խուլ ձայնով — հիւսիսային մի գառնաշղունչ քամի է բարձրացել...

Ցանտէրն էլ մտաւ ննջարանը դատաւորի ետևից և երկուսն էլ մնացին այնտեղ:

Այս կողմում տանտիկինը գտել էր լուցկին, վառեց կանաչ սեղանի մոմերը և ալժմ նոքա սկսեցին պլապլալ դեղին տիսուր լուսով:

— Որքան զախեցալ. շշնջաց աղջիկներից մէկը.

— Յիմար մի լինէք, ասաց նեղացած հօրաքոյրը կը պած դաշնամուրին — քամուց էլ մարդ կը վախենալ:

— Անշուշտ, արեց գերասանը խորհրդաւոր կերպով — թէև նա մտրակի, ջարդի, բայց չը պիտի վախենալ...

— Ի՞նչ էք անում ներսում. գնաց դէպի ննջարաւնի գուռը տանտիկինը:

— Ոչինչ, ոչինչ, լսուեց տանտիրոջ ձայնը — կը գտնք այժմ...

Եւ իրաւ, նախ դատաւորը դուրս եկաւ ննջարանից, յետոյ տանուտէրը և գուռը ետևից ամրապէտ փակեց:

— Խիստ քամի է բարձրացել... ասաց նա:

Եւ ձայնը դողում էր. Թէ նա և թէ դատաւորը զգալի կերպով գունատ էին, սակայն ոչ ոք չը նկատեց ալդ:

— Նարունակենք. ասաց դատաւորը և նստեց խաղաղադանի առաջ:

Քիչ լռութիւնից յետոյ, Վառօն նստեց իր աթոռի մէջ, օրօրուեց և ասաց.

— Ե՞ս էլ վախեցալ...

— Ի՞նչ... մռմռաց դատաւորը — ոգինելը... ինչ երեխայնութիւն...

— Թող, Վառօ, ձայնեց եղբայրը — ամէն բանի մէջ դու հէնց ոգիներ ես տեսնում:

— Եւ ինչու ոգի չը լինի ամէն բանի մէջ. աւելացըց տանտիկնոջ եղբայրը վիլխովալօրէն — ասում են որ օգի մէջ անգամ կալ...

— Չը գիտեմ. դողաց Վառօն — երբեմն հաւատում եմ, որ մեր մեռածների հոգիները գալիս են մեզ մօտ... ինչ որ սպիրիտիստներ էլ պնդում են ալդ:

— Երեխայնութիւն... ասաց ուժգնութեամբ դատաւորը — Ոգի չը կայ...

— Պ. Դերասանը գուցէ գիտենալ. շարունակեց Վառօն — ասում են որ իրը թէ մեռածների հոգիները հաղորդակցութեան մէջ են մտնում մեզ հետ, և, երբ լուսութ

չենք հասկանում—այն ժամանակ սեղանների միջոցով են մեզ հետ խօսում...

—Միայն թէ գրասեղանի և ոչ թէ խաղասեղանների. ասաց կծու կերպով դերասանը:

—Միթէ ճիշտ է այդ. հարցրեց հարսը:

—Ե՞ս էլ լսեմ եմ. աւելացրեց տանտիկինը—Ասում են որ սեղանը շարժւում է... Զեմ հաւատում, ֆօկումներ կը լինեն:

—Դէ ի հարկէ. գոչեց արհամարհաբար Սեղրակը—բնչ ոգի, բնչ բան... Հանգիստ թողէք մեռածներին... Այնպէս չէ, պ. դերասան:

—Չը գիտեմ. խօսեց դերասանը—բայց ինձ թւում է, որ ոգիներ կան... Եւ կամ կան բաներ, որոնք ոգի ունեն. որովհետև կաշկանդեցէք որքան կուղէք այդ բաները, սակայն նրանց ոգիները կը խօսեն... Կաշկանդեցէք, օրինակ հէնց լեզուն... և սեղանները կը խօսեն նրա փոխարէն... Երբ դառնաշղունչ քամիներ խեղտեն ոգիներին, նրանք սեղանների միջոցաւ են սկսում խօսել... Ես ինքս տեսել եմ այդ՝ հեռու-հիւսիսում անգամ... Սեղանը—գրասեղանը շարժւում էր և նշաններով շատ բան ասում... Տեսել եմ և աւելին.—երաժշտական խազը՝ կոկորդի մէջ խեղդուած, գործիքը զահարանի մէջ փակած՝ հնչում է... և հնչում՝ թէն տիրագին, բայց աւելի պարզ և աւելի ցնցիչ... Տեսել եմ նոյնպէս թէ ինչպէս ոտները ամուր կապած գրասեղանը լանկարծ, ինքն իրեն՝ ազատւում է կապերից և գնում ուզած տեղը... Ասում են որ գրասեղանը շղթայել անհնար է...

—Ինչպէս... բայց այդ բնչ ալլանդակ բաներ էք ասում, մէկը միւսից տարօրինակ. գոչեց տանուտէրը խաղաթղթերը ցած նետելով:—Հարբած խօ չէք, պ. Սարգսեան:

—Բայց ոչ. ժպտաց դերասանը—ամբողջ ախորժակըս պահել եմ այսօրուայ համար... Հարբած չեմ. ձեզ իրողութիւններ եմ պատմում:

Դատաւորն էլ դադարեց խաղալուց և դերասանին նալեց:

—Այո. շարունակեց վերջինս... Եւ եթէ կուղէք,

մի համառօտ դէպք պատմեմ ձեզ... Մի անհաւատալի երողութիւն... ջղերը թոյլ ունեցողները թող չը լսեն... Կանալք դողացին. աղջիկները վախեցած՝ աչքերը մեծ մեծ բաց արին, բայց և հետաքրքրութեամբ մօտ եկան:

—Ե՛հ, թողէք, պ. Սարգսեան. մէջ մտաւ տանտիկինը—Հերիք է կատակներ անէք, Բնչ էք վախեցնում տիկիններին:

—Բայց ոչ, ով է վախեցողը. բռնազրօսիկ կերպով ծիծաղեց Վառոն—քիչ ենք լսել հեքեաթներ, լիմառական զրոյցներ... Պատմեցէք, պ. դերասան, սովորենք մենք էֆէքտաւոր բաներ խօսող դերասանների լսել:

—Նորհակալ եմ. խոնարհուեց ծաղրաբար դերասանը — ես կը պատմեմ ուրեմն և համարեցէք պատմածս հեքեաթ, եթէ դա ձեզ կը մխիթարի...

Եետոյ շարամիտ ժպտաց, քաշուեց Հնօցի կարմիր լուսի մէջ, կոթնեց դաշնամուրին և պատմել սկսեց:

Խաղացողները կանգ էին առել. Սեղրակն էր միան, որ խաղաթղթերը կուտած ձեռքին՝ խառնում էր զղածքօրէն և արհամարհոտ կերպով, ճարպոտ աչքերի շուրջը ներողամիտ ժպիտ կազմած՝ լսում էր:

Լամպի լոյսի շուրջը ցորենազոյն գոլորշին մի բակ էր կազմուել և սենետակը աւելի խաւարի մէջ ձգել:

III

... «Մի օր իմ ընկերներից մէկը — սկսեց դերասանը — տարաւ ինձ սպիրիտիստների փորձերին ներկալ գըտնուելու: Խնդրել էի տանել. Այդ օրը հաւաքուել էին մօտ 15 հոգի: Խօսեցնում էին մի ինչ որ տանջուռդ սգու, որ իր պատմութեան կէսը պատմելով անցեալ փորձին, խոստացել էր շարունակութիւնը այս անգամ պատմել: Եւ նկատեցէք, որ խօսող ոգին լաճախ անկապ բաներ էր ասել և լաճախ գանգատել, որ «քամիները չեն թողնում», որ ինչ որ չար ոգիներ «արգելում էին իրեն խօսելու» ևալին ևալին: Խոստովանում եմ, ալդ երեկոյ քէֆս տեղն էր և մտադրել էի մի

լաւ օյին խաղալ այդ ոգեկոչների զլիին։ Ախր ինչպէս կարելի է երնակալել, որ մի խումբ մազ ու մօրուքով մարդիկ հաւաքուեն նստեն մի կիսախաւար սենեակում, դէմքերը երկարացրած, աչքերը չռած լսեն մի ինչ որ ընկնաւորի բարբաջանքները և լետոյ, հաւտան, որ ալդ բոլորը ճիշտ են, որ ընկնաւորի միջոցաւ ոգի է խօսում ևալն ևալն։

«Երբ ներս մտալ, արդէն սկսել էին։ Ճիշտ այսպէս մի լոյս էր սենեակում, աղօտ, ցորենագոյն... հընոցի կըտակն էլ այսպէս կարմիր լոյս էր սփոել, դրսումըն էլ փչում էր խստաշունչ, ամէն բան սառեցնող քամի...»

«Ենձ տեղ տուին մի անկիւնում։ Խաւար անկիւնում նստել է մէդիումը՝ քնածի նման, գլուխը աթոռուի թեփ վրայ դրած և խօսում է. իսկ մէկը գրում է... լարում եմ ուշադրութիւնս... ոչինչ չեմ հասկանում... միայն բառեր։»

«—Ոգին չե ուզում խօսել... ասաց ընկերս ականցիս—կաշկանդուած է... չեն թողնում խօսի։

«—Մի բաժակ կոնեակ տուէք, երևի մըսում է. կատակեցի ես։

«—Յիմա՞ր, ասաց ընկերս—քեզ կոնեակը խօսեցնում է, բայց երբ ոգին կաշկանդուում է, նրան ալլ ևս դժուար է խօսեցնել։»

«—Ապա ինչ անենք... գնանք ուրեմն։

«—Ոչ, սպասիր։»

«Եւ իրաւ, այդ միջոցին մի ալլանդակ բան էր տեղի ունենում սենեակում։ Անկիւնում դրուած ծանր գրասեղանը ինչ որ կարծես շարժւում էր, թէ ես էի շարժւում խմանս կօնեակից—ըս գիտեմ, միայն բոլորն էլ վագեցին դէպի մեծ գրասեղանը, հաւաքուեցան նըրա շուրջը, և, Աստուած է վկալ, մազերս բիզ-բիզ եղան, երբ տեսալ թէ ինչպէս ահագին սեղանը շարժւում էր տեղից, սահում լատակի վրայով և իր վրայ պտոյտներ գործում...»

«—Ես հարբած եմ... բոթեցի ընկերոջս—բայց դո՛ւ ասա, սեղանն է այդ շարժուողը։

«—Այո, գրասեղանն է։»

«—Ինքն իրեն է շարժւում:

«—Անշուշտ... ոգին նրա միջոցով է ուզում

խօսել:

«—Յիմարութիւննե՞ր...

«Ու դէն եմ հրում ամէնքին, ծուռում դէպի գըա-
սեղանը, չեմ թողնում ոչ մէկին մօտենալ... Այո՛, շարժ-
ւում էր անպիտանը, մի ոտքով՝ լսելի ձալնով յատակը
ծեծում...

«—Թո՛ղ, բոթեց ինձ ընկերս - միևնորդ է, դու
նրա լեզուն չես հասկանալ. հարբած մարդու բան չէ
ալդ. թող որ մենք պարզենք:

«Յետոյ վերցնում են թուղթ-մատիտ, ինչ որ բան
հաշւում, գրում են, ուշադրութեամբ լսում ըոպէնե-
րով և նախադասութիւններ կազմում:

Կամաց-կամաց սթափում էի: Ուր էի ես, ալդ
ինչ տեսակ բան էր, ինչո՞ւ էր սեղանը շարժւում, ինչ
էր ասում...

«Եւ երբ պատրաստում էի ընկերոջս հարցնել, յան-
կարծ տեսնում եմ որ սենեակի վերևում կապոյտ լոյսի
խոշոր շարժուն կալեր դէս ու դէն են թռչկոտում,
իջնում են սեղանի կողմի անկիւնը, ելնում դէպի մը-
թութիւնները... Մի խօսքով մի այնպիսի ֆանտաստիկ
բան, որ այլ ևս չը կարողացալ դիմանալ, առի գլխար-
կըս և գուրս փախար...

«Միւս օրը ընկերս ինձ մօտ եկաւ: «Քնած էի.
նստեց անկողնիս մօտ և առաջին խօսքը որ ասաց՝ հե-
տևեալն էր.

«—Ոգիները կաշկանդուել են, բարեկամ... ալսուհե-
տև սեղանները պիտի ասեն մեզ այն, ինչ որ ոգիներն
էին ասելու...

«—Ուրեմն իրաւ էր, գոչեցի ես վեր թռչելով—
գրասեղանը խօսնմ էր:

—«Այո՛, ասաց նա— նշաններով... Ոգիները չեն
լոռում, ոչինչ նրանց չէ կարող արգելք լինել. այս կամ
այն միջոցաւ նրանք կարտայալտեն իրենց միտքը, լինի
դա մեղիումի կամ գրասեղանի միջնորդութեամբ...

—«Իսկ ինչ էր ասում ալդ սեղանը:

— «Նաբունակում էր ասել այն, ինչ որ տանջուած ոգին էր ճառում»...

... Ահա, պարոններ, ինչ որ պիտի պատմէի ձեզ: Կուղէք՝ ասէք որ հարբած էի և ինձ խարում էին, սակայն ես համոզուած եմ, որ գրասեղանները կարող են խօսել. մանաւանդ այն ժամանակ, երբ ոգիները կաշկանդում են...

Ասաց գերասանը և անշարժ ու լրու մնաց:

Պահ մի բոլորը չը խօսեցին, յետով յանկարծ դատաւորը մի մեծ և երկար քրքիչ արձակեց և գոչեց սուր ձայնով.

— Բայց պարոններ, չէք տեսնում որ պ. գերասանին լիմարացրել են և ինքն էլ մեզ է ուզում ալժմ լիմարացնել:

— Ես ուզույ էի տեսնել թէ էլ ինչ հեքեաթ կը պատմի մեզ պարոնը. ասաց Սեդրակը—խօսող սեղան... լսել ենք այդ... նստում են, մէկը վարպետութեամբ ձեռքով կամ ոտքով շարժում է և ահա բոլորին վախեցնում, ինչպէս հաւերի կը վախեցնեն:

— Ուրեմն դուք չէք հաւատում. խօսեց գերասանը—Նատ լաւ, տուէք ինձ մի սեղան:

— Թողէք, թափահարեց ձեռքը Սեդրակը— իզուր կը վախեցնէք կանանց, մինչդեռ ոչ մի վախենալուքան չը կալ մի ֆօկուսի մէջ...

— Ա՛յ, կը տեսնենք Փօկուս է թէ ոչ... խնդրեմ տուէք ինձ մի փոքրիկ սեղան:

Տանտիկինը շտապեց տալ ուզածը:

Խոր լրութեան մէջ գերասանը գորգի մի ծալրը ետքաշեց, սեղանը զրեց յատակի տախտակի վրայ, յետոյ մօտ կանչեց ամէնքին և զրջանաձև նստեցնելով սեղանի շուրջը, պատուիրեց ձեռքերը իրար միացնել և թոյլ կերպով ափերը դնել սեղանի վրայ:

— Թո՞լ լինի... ասաց Սեդրակը ծիծաղելով—քիչ էլ երեխալութիւններ անենք... հետաքրքիր է թէ պ. գերասանը ինչպէս պիտի խօսեցնի սեղանին:

— Ֆօկուսներ չանէք, ծիծաղեց տանտիկինը:

— Ֆօկուս չի լինի, ասաց գերասանը—զգում եմ որ եկել է գրասեղանների խօսելու ժամանակը... Ալժմ

ալդպէս անշարժ նստէք մտովին բոլորդ էլ ջերմ կեր-
պով ցանկացէք, որ սեղանը խօսի և պատասխանի մեզ:
Տիրեց նորից լուռթիւն: Բոլորը հետաքրքրում
էին: Խորհրդաւոր բաները, որքան և երեխալական կամ
լիմարական լինին, լուրջ մարդկանց անգամ հետաքըր.
Քրում են:

— Նուտ կը լինի, չը համբերեց և հարցրեց Վառօն:

— Չը գիտեմ. դա կախուած է ընդհանուրի միա-
համուռ ցանկութեան խստութիւնից:

— Ֆուհ, ծիծաղելի է ալսպէս նստելը, կարծես
մանուկներ լինենք:

Բայց, չը գիտեմ ինչպէս եղաւ, հազիւ թէ նա
ալդ ասել էր, որ սեղանը խլրտաց ճիշտ նրա ձեռ-
քի տակ:

Պառաւ աղջիկը սոսկումով ձեռքը ետ քաշեց և
գոռաց.

— Աստուած իմ... կարծես շարժւում է:

— Այս, շարժւում է... խօսեց դերասանը — ձեռ-
քերը ետ մի քաշէք և լոեցէք...

Սեղանը խլրտում էր, քիչ լետոյ տարութերուեց
այս այն կողմ, իտոյ ծանրութեամբ մի ոտքը բարձրաց-
րեց և ամբողջապէս սկսեց ծուռել դէպի տանտիկինը:

— Ո՞վ է այս շարժողը. ձախնեց պառաւ աղջիկը —
Դուք մեզ հետ խաղողւմ էք, մեզ լիմարացնում, պ.
Սարգսեան, դուք էք շարժողը:

— Բայց ոչ, երդւում եմ, օրիորդ... լոեցէք քիչ:

Եւ ինքը դերասանն էլ խորին ուշադրութեամբ
նայում էր սեղանի ոտներին՝ եթէ ոչ իրականօրէն,
գոնէ ձեացնելով, որ զուարած է և ստրսափով բռնուած:

— Խնդրեմ ո՛չ ոք չը սեղմի և չը շարժի սեղանը...
ասաց նա — ոտքելնիդ հեռու... Ալդպէս...

— Միթէ իրաւ շարժւում է. հարցրեց Սեդրակը
միւսներին:

— Նարժւում է անիծածը. ասաց տանտիրոջ եղ-
բարը:

Տանտէրն ու դատաւորը միմեանց նայեցին՝ ուսե-
րը թոթուելով:

— Եւ ապահով էք որ մէկն ու մէկը չէ շարժողը.

Հարցընց նորից Սեդրակը և ծռուած՝ նայում էր սեղանի ոտներին:

Սեղանն ալժմ միւս ոտն էլ բարձրացըն, սկսել էր պտտել: Նստողներն ելան:

— Նստեցէք. ասաց գերասանը — ես խօսեցնում եմ: Լուռ կացէք...

Բոլորը լուռ՝ կռացան դէպի ոտքերը:

— Սեղան, ասաց գերասանը կոմիքական հանդիսաւորութեամբ — հանգիստ կաց այժմ. իջիր և մի քիչ խօսիր մեզ հետ... Դէհ, եթէ տռամադիր ես, միայն իմ կողմի ոտքը բարձրացուր և երեք անգամ խփիր:

Մի վայրկենի խոր լրութեան մէջ սեղանը իջաւ, յետոյ ծանրութեամբ բարձրացընց ոտը և երեք չոր հարուածներով բազինեց յատակը:

— Օ՛... օ՛... արին ամէնքը:

Խաղասեղանը թողել էին. տանտէը վակեց ճա. շարանի դուռը:

— Ես չեմ հաւատում. գոչեց խստութեամբ Սեդրակը — ձեզնից մէկն է շարժողը. ինքը պ. Դերասանն է, մեզ ուզում է խաղ խաղալ:

— Պարօ՞ն... նեղացաւ գերասանը — ասացի որ ես չեմ շարժողը. ես ինքս մինչև իսկ չեմ հաւատում եղածին... Ասացէք, տիկիններ, ձեզնից ոչ ոք չէ շարժում:

— Ո՛չ ոք, ո՛չ ոք... գոչեցին ամենքը:

— Տաշօրինակ է. ասաց գատաւորը նայելով տանտիրոջ — ես լսել էի, բայց չէի տեսել և չէի հաւատում:

— Ես էլ ասաց տանտիկնոջ եղայրը:

— Ուրեմն տրամադիր է խօսելու. Հարցընց Վառօն զղայնութեամբ — խօսեցընք, պ. Սարգսեան... Ա՛խ, ես կուզէի շատ բան իմանալ. . Գուշակում է... ամէն հարցի կը պատասխանէ:

— Ամէն հարցի:

— Եւ ճիշտը:

— Բոլորովին ճիշտ... Միայն թէ առաջ թողէք, մի քանի հարցեր հարկաւոր են տալ, խնդիրը պարզելու համար:

— Ո՛չ այդպէս. գոչեց Սեդրակը — ես չեմ հաւատալ,

մինչեւ որ փաստ չունենամ... Եթէ ճիշտ բան է ալդ,
ապա, թող ասի ինձ թէ որքան փող ունեմ ես...
—Ալո՛, ալո՛, ձայնեցին ամէնքը—թող ասի տես-
նե՞նք:

—Իսկ դուք ճիշտ գիտէք թէ որքան է ձեր սեփ-
հական փողը... ասաց գերասանը նշանական կերպով:
—Ի՞նչպէս... շփոթուեց Սեդրակը—իմ փողերի հա-
շիւը չը գիտեմ ես...
—Անշուշտ... գիտէք... լաւ...

Արեց գերասանը մի ժպիտով, կռոցաւ դէպի սե-
ղանի ոտքը և գոչեց գերասանօրէն.

—Ապա՛, սեղան, ասա մեղ թէ որքան փող ունի
ճարտարապետ պլ. Սեդրակը... իմ կողմի ոտքով խփեր
մի հարուածն՝ մի րուբլի...

—Եթէ ալդպէս է, մինչեւ մի ժամ պիտի համրի,
ծիծաղեց դատաւորը և նստեց:
—Տեսնե՞նք...

Սեղանը գեռ չը շարժուեց: Ամենքը լարուած
ուշադրութեամբ, նոյն իսկ ձեռքերը սեղանի վրայ ու-
նեցողները՝ կռացան դէպի ոտները:

Քիչ յետով ծանրութեամբ բարձրացաւ ոտքը և
լսուեցին խուլ ու չոր հարուածներ: Բոլորը համրում
էին: Ոտքը տասնեւվեց հարուած տուաւ, յետով օդի
մէջ մի քիչ մնաց և իջնելով՝ լոեց:

—Տասն և վեց ու կէս... ասաց գերասանը:
—Տեսաք, ծիծաղեց Սեդրակը—ալդքան լիմար բան
չէի լսել... միան 16 ու կէս... իսկ ես աւելի քան
այդ ունեմ հէնց գրպանումս...

—Բայց պարոն, ասաց գերասանը — ի նկատի
ունեցէք, որ խօսող սեղանները ստել չը գիտեն և
ճշմարտութիւնը, որքան էլ կծու լինի նա - կասեն
առանց քաշուելու...

—Ի՞նչ էք ուզում տաել...

—Թողէք, մէջ մտաւ տանտէրը—ալդ հետաքրքիր
է... Ուրիշ բան հարցը էք:

—Բայց ո՛չ, ո՛չ... գոչեց Սեդրակը—ի՞նչ է ու-
գում տաել պլ. գերասանը իր սեղանովը...

—Ոչինչ, ոչինչ, պլ. ճարտարապետ, պատասխանեց

խուսափողական կերպով դերասանը—խօսողը ես չեմ,
այլ սեղանը. և նա, զգուշացնում եմ բոլորիդ, զիտէ
ամէն զաղտնիք. Ալժմ, տիկիններ և պարոններ, սե-
ղանի ճշմարտութիւնը փորձենք մի ուրիշ բանով:

Եւ չը թողնելով որ ընդհատէին իրեն, դարձաւ
սեղանին ու ձայնեց.

— Ապա, սեղան, ասա մեզ, քանի տեսակ կերա-
կուր պիտի ուտենք ընթթիքին:

Սեղանը նոյն ոտքով վեց հարուած տուաւ: Տան-
տիկինը վախեցած վեր թռաւ, տանտէրը ետ քաշուեց,
քաշեց իր հետ դատաւորին և սկսեց նրա հետ փսփսա-
լով խօսել:

IV

Ու մինչ բոլորն էլ ճնշող և խոր լուսթեան մէջ
սպասում էին և մի քանիսը շտապեցին ձեռքը ետ
քաշել,

— Բայց սա հրաշք է... բացականչեց պառաւ աղ-
ջիկը—սրտեղից պիտի իմանար այդ... ծիշտ է որ վեց
տեսակ է կերակուրը:

— Այո. մռմռաց տանտիկինը:

— Ճատ լաւ ուրեմն. կատակեց դերասանը— լաւ
կուտենք և անօթի փորով չենք դիմաւորիլ նոր-տա-
րուն... Իսկ ալժմ, թողէք իմանանք, թէ ով է մեզ հետ
խօսողը այս սեղանի միջոցաւ:

— Ինչպէս... ճշաց Վառօն—ոգին...

— Եհ, էլի սկսեցիք լիմարութիւնները, մէջ մտաւ
դատաւորը:

— Ապա ով ուրեմն:

— Զը գիտեմ... անշուշտ մի ոգի է... տեսնենք...
ասաց դերասանը— Ապա, սեղան, նոյն ոտքովը խփիր
թէ ով է քո միջոցով խօսողը: Երկու հարուած՝ կը նը-
շանակի ոչ. երեք՝ այու: Ոգի է:

— Ո՛չ:

— Կենդանի էակ:

— Ոչ...

Բոլորը միմեանց երեսի նալեցին զարմացած:

—Մեռած մարդ է:

—Ոչ:

—Տարօրինակ, մոմուաց գերասանը: —Ապա ով է... Ալբուբենով խօսիր... լռեցէք բոլորդ. հայերէն ալբուբենով պիտի խօսի. որ տաւի վրալ կանգ առնի՝ լիշեցէք... Սկսիր, սեղան:

Ու լռութիւնը տիրեց: Լսում էր միայն սեղանի ստքի չոր և արագ հարուածները: Քիչ լետով կանգ առաւ Ե դառի վրալ և նորից սկսեց: Հինգ ըոպէց լետով ստացուել էր... «Երկու զգացմունք» բառերը:

—Երկու զգացմունք... գոչեց Վառօն—ինչ է ուզում ասել. ուրեմն ոգիներ չեն խօսողները, այլ զգացմունքներ... Հետաքրքիր է...: Ապա, ալժմ իմացէք թէ որն է առաջինը:

—Սեղան, խօսիր, որն է առաջինը:

Ու սեղանը դարձեալ սկսեց: Այս անգամ ստացուեց մի անորոշ բառ, որ նման էր ճարց, հետ... և ալին անորոշ մտքերի... նորից կրկնել տուին և նորից անորոշ միտք ստացուեց:

—Երկրորդը հարցրէք. գոչեց Սեդրակը:

—Սեղան, երկրորդը որն է, ի՞նչ բան է...:

Սեղանը քիչ լուռ մնաց, ապա լանկարծ ոտքը փոխեց և ուրիշ ոտքով սկսեց տենդալին, արագ, իրար խառնող հարուածներ տալ. շարժուեց, միւս ոտքն էլ բարձրացրեց, ստտել սկսեց...: Առհասարակ ալնպիսի գժութիւններ արաւ, որ ոչ ոք չը կարողացաւ ծիծաղը զսպել:

—Գժուում է, տօ... բացագանչեց տանտիկնոց եղբայրը—կարելի է քաղցած ու ծարաւ է մեզ նման:

—Հանդարտ մնացէք, ասաց գերասանը—երբեմն պատահում է ալդպիսի բաներ և լալտնի չէ թէ ինչ չըւ... Այս ըոպէիս կը հանդարտի:

Եւ իրաւ, սեղանը մի շարք գժութիւններից լետով հանդարտեց և անշարժ մնաց:

—Ալժմ, սեղան, դարձաւ նրան դերասանը—ասամ մեզ թէ ինչ է այն երկրորդ զգացմունքը, որ խօսում է քո միջոցաւ:

Զը գիտեմ ինչո՞ւ, մէկէն բոլորը լրջացան և ուշադրութեամբ, կարծես սրտատրոփ՝ սպասեցին։ Մի ինչ որ խորհրդաւոր բան կարծես իջաւ սենեակում։ Լամպի լոյսը շոգու մէջ՝ շատ աղօտացել էր, իսկ հնոցի կարմիր լոյսը այժմ կանգ էր առել սեղանի ոտքերի վրա։

Եւ արդ արնեգոյն լոյսի մէջ էր, որ մի ըսպէի լրութիւնից յետոյ, սեղանի ոտքը ծանրութեամբ ելաւ և սկսեց չոր, զըգոիչ և դող ազդող հարուածներով բաղիսել յատակը։

Մի քանի հոգի միայն հետեւում էին հարուածներին ու կըկնում այբուբէնը։

Առաջին տառն էր «Ձ», յետոյ՝ Ն, յետոյ՝ Ռ։ Կազմուել էր ծեր բառը։ Բոլորի սիրտը բարախում էր. արդեօք յետոյ ինչ բառ պիտի ասէր սեղանը։ — Ճեր՝ ինչը... ինչ էր ուզում ասել. Սեդրակը նստել էր, տանտէրը դռան մօտ, երբեմն, գաղտնագողի ակնարկներ էր նետում գէսլի ննջարանը. դատարարը կուացած նայում էր. կանալք բոլորն էլ գլուխնին ծուած՝ ձեռքերը սեղանի վրա, գիտում էին գունատ և հնոցի լոյսը երբեմն արեան գոյն էր սփոռում նրանց մազերի և դէմքերի վրա։

Սեղանի ոտքը անընդհատ բաղխում էր։ Քիչ յետոյ ստացուեց «զիտակ» բառը։

— Ձեր «գիտակ»... մումոաց Սեդրակը — ոչ մի միտք չի դուրս գալիս։

Եւ երբ ոտքը խփեց ծ գիրն ևս, տանտիկինը գոչեց։

— Գիտակցութիւնը... Ալո՛, մեր գիտակցութիւնը...

— Օ... արեց պառաւ աղջիկը — մեր գիտակցութիւնը... Սարսափելի է... ալսինքն՝ խղճի ձախնը... Ելէ՛ք, ելէ՛ք... բաւական է։

— Ո՛, ո՛չ. պնդեց հարսը — զեռ նստենք... Ուզում եմ օրինակ հէնց ես իմանալ թէ մեր խղճի ձախնը ինչ է ասում մեզ կամ ինչ գրոշմում մեր ճակատի վրա։

Սեդրակը բարկացած վեր թռաւ. պառաւ աղջիկը մի շանթահար ակնարկ նետեց իր հարսին։

— Բաւական է. գոռաց Սեդրակը — դադարեցէք, պարո՞ն, հերէք է յիմարութիւնները։

— Ինչո՞ւ. պնդեց հարսը տաքացած — քանի որ սեղանների խօսելու ժամանակն է և բերանները փակւում են, թող նա գոնէ ասէ մեզ ճշմարտութիւններ... խնդրեմ, պ. Սարգսեան, հարցըէք ինձ համար, ես ուղում եմ:

— Բայց սա անտանելի է, Լիզա. բարկացաւ նրա վրայ տալը — ինչ ես ուզում ասել. երեխայ խօ չես որ ալդպէս բանները սրտիդ մօտիկ ես վերցնում... Սրանք կատակներ են, խաղեր են միալն... ահագին կին ես, որդիների տէր...

— Դեռ այնքան էլ պառաւ չեմ. ասաց կծու ձայնով հարսը — ինձնից պառաւներն են սրտի մօտիկ վերցնում, խաղը լուրջ նկատում... խնդրում եմ նորից, պ. Սարգսեան, հարցըէք սեղանին. ինչ կարող է ասել նա իմ մասին... լոկ ճշմարտութիւնը թող ասի...

— Հերիք է, Լիզա. համոզեց նրան տանտիկինը — արդէն ջղերիդ վրայ ազգում է ալդ բոլորը... թողէք, պ. Սարգսեան... Պարոններ, գնանք սեղանատուն, քիչ յետով 12սը կը լինի:

— Ոչ, յամտաեց Լիզան — ուզում եմ իմանալ, պ. Սարգսեան, հարցըէք շուտ... Եթէ ձեզնից վախեցողը կալ իր խղճի ձայնից, թող չը հարցնի. ես ուզում եմ հարցնել:

Այէնքը լոեցին: Լոեց նաև Վառօն, բայց բարկութիւնից դեղնած սկսեց շրթունքները խածնել: Սեղբարակը շփոթուած՝ քաշուեց մի մութ անկիւն. տանուտէրն ու դատաւորը գնացին դէպի լուսամուտը:

Իսկ Սարգսեանը, քիչ սրան.նրան նայելուց յետու, գլուխը երերցըց, յետոյ դարձաւ սեղանին և ասաց.

— Սեղան, ալստեղ կամենում են, որ դու ասես թէ ինչ կարող է գիտակցութիւնը դրոշմել իւրաքանչչիւրի ճակատի վրայ... փափուկ և վատ դրութեան մէջ ես, կարող են գլուխդ ջարդել՝ եթէ ուղիղն ասացիր... բայց դու գիտես ալժմ... .

Տանտիկինն ու Լիզան քրքիացին ջղալնութեամբ:

— Հա... շարունակեց դերասանը կոմիկաբար — ասում են որ ճշմարտութիւնը խօսողի ձին պատրաստ

պիտի լինի, որ հեծնի և փախչի... Գեղ, ի հարկէ, ոռ
լինչ. բայց քեզ բացատրողին...

—Ո՞չ, ո՞չ, Բնչ կալ ձեզ մեղադրելու. ասաց Լի-
զան, լետոյ դարձաւ բոլորին և հարցրեց—Այնպէս
չէ, պ. Սարգսեանը ալսաեղ բոլորովին մեղաւոր չէ:

—Ի հարկէ, ի հարկէ... լսուեցան ձայներ:

—Ինչ որ է. շարունակեց դերասանը—ալժմ խօ-
սիր... բայց որովհետեւ բոլորս քաղցած ենք և այբու-
բենով շատ երկար կը տեի... մի օրիգինալ բան մը-
տածեցի... Ահա, կը վերցնեմ Աստուածաշունչը... Ու-
նիք արդ գերքը... Նատ լաւ, տուէք... Կը բաց անեմ
տասը պատուիրանները և որին ինչ ասես, պատուիրան-
ների շարքը միայն ցոյց տուր... Օրինակ, եթէ ինձ
համար ուղենաս ասել թէ՝ դրացիիս կնոջը աչք եմ խը-
ֆել, կարող ես խփել 9-իններորդ պատուիրանը և այլն
և ալլն. իսկ եթէ բան է, մեզնից մէկը չի հաւատում
Աստուն՝ խփիր մէկ...

—Ի՞նչ անհամ կատակներ են. ասաց Սեղրակը
մութ անկիւնից:

—Անհամբեր են բոլորը, սեղան. շարունակեց դե-
րասանը—և դրա համար էլ, առաջ ինձ համար խօսիր:
Ի՞նչ կարող է ասել ինձ գիտակցութիւնը,

Եւ դերասանի ձալնը լի էր ծաղրական, լանդուգն
շեշտով:

Սեղանը բարձրացրեց ոտքը և խփեց 9-ը:

—Հըմ... լանդուգն կերպով ժպտաց դերասանը—
գուրս եկաւ որ ես ուրիշի կնոջ...

—Բայց բաւական է, պարո՞ն, գոչեց պառաւ աղ-
ջիկը—գուք ձեզ մոռանում էք:

—Ներեցէք, օրիորդ. ալժմ ուրիշնը... Կուզէք
ձերը:

—Ո՞չ, ո՞չ. ինձ հանգիստ թողէք. ես պէտք չունիմ:

—Հանգիստ թողէք օրիորդին. խօսեց հարսը—ինձ
համար հարցրէք...

Սեղանը ոտքը բարձրացրեց ու ալդպէս մնաց եր-
կար. կարծես զուարում էր: Յետոյ, գահավիժմամբ ի-
շաւ, երեք անգամ խփեց և անշարժացաւ:

—Պատուիր հօրդ ու մօրդ, կարդաց գերասանը
գըքում:

—Շնորհակալ եմ. ժպտաց գունատ՝ Լիզան—եթէ
ես չեմ պատում, պատճառն ու մեղաւորը ես չեմ:
Եւ շեշտակի նալեց պառաւ տալին: Իսկ սա զայ-
րացած՝ գոչեց.

—Բոլորը սուտ է... թո՞ղ ալժմ ինձ համար ասի
տեսնենք...

Սեղանը իսկոյն ոտքը շարժեց, և, և սարսափ բո-
լորի՝ խփեց ո՛չ միայն ճ անգամ, ալլ և իսկոյն յետոյ
էլի խփեց 6 թիւը և մի երրորդ անգամ էլ՝ 7:

Դերասանը շուարեց ու շփոթուեց, երբ գըքի մէջ
նայելով տեսաւ որ ճ-ի դիմացը գրուած էր. «Մի սպա-
նիր», 6-ի դիմացը՝ «Մի շնար», իսկ 7-ի դիմացը — «Մի
գողանալ»:

Ու լոեց:

—Կարդացէք, գոչեց Լիզան—ինչո՞ւ էք լոռում.
այստեղ գուրս եկաւ 5, 6, և ապա 7-ը: Ի՞նչ է գրած:

Դերասանը լուզուած մի քան կմկմաց և ապա ցած
ձայնով կարդաց.

—Մի սպանիր... Մի շնար... Մի գողանալ...

Պառաւ աղջկկը մեռեալի պէս գունատ՝ ձեռքը ետ-
քաշեց, ընդունեց այդ հարուածները, յետոյ մէկէն տե-
ղիցը ելաւ և գոչեց.

—Ահա ձեզ և նոր տարի. եկել ենք այստեղ, որ
ենթարկուենք մի խեղկատակի հայկոյանքների... Գանք
տուն, Սեղբակ...

—Բայց Վառօ, մօտեցաւ նրան տանտիկինը — Սա
կատակ է... պ. Սարգսեանը կատակ է անում, ինչո՞ւ
ես լուզուամ... վերջապէս թողէք, պ. Սարգսեան, ինչ
անտանելին էք... կորցրէք այդ սեղանը...

Սակայն դատաւորը, որ մինչեւ այդ լուռ էր, ա-
ռաջ եկաւ, կանգնեց սեղանի մօտ և լուրջ՝ ասաց.

—Ո՛չ, ես էլ եմ ուզում իմանալ:

Սեղանը սկսեց խփել և կանգ առաւ 7-ի վրայ:

—Մի գողանալ... կարդաց գերասանը:

—Գողանալ... աշխատեց ծիծաղել դատաւորը-

կեանքումս գողութիւն չեմ արել... Զեր սեղանը ստա-
խոս լիմար է:

— Խեղճ սեղան... չասացի .. մռմռաց դերասանը
սեղանին դառնալով — ահա և քեզ վարձատրութիւն:

— Ոչինչ բան է, շարունակեց դատաւորը հեռա-
նալով — Գնա, Սեդրակ, դու էլ հարցըու, տեսնենք ու-
րիշ բնչ սուտեր կասի:

— Լաւ... արեց Սեդրակը ակամայ և տեղիցը չը
շարժուեց — թող հարցնի:

Սեղանը ծանրութեամբ ելաւ, ծանրութեամբ իջաւ,
նախ խփեց:

— Անհաւատ... ծիծաղեց դերասանը,

Սեդրակը ազատ շունչ առաւ:

— Ոչինչ բան է. ասաց նա:

Սեղանը սակալն նորից սկսեց և այս անգամ խը-
փեց 8.

— Մի սուտ վկալիբ:

— Յիմարութիւն... արեց Սեդրակը — յետո՛ր:

Սեղանը խփեց զարձեալ ճ թիւը:

— Մի սպանաներ...

— Ումն ես սպանել. գոչեց Սեդրակը լուզուած
— դա կատարեալ սուտ է... Միթէ ես և քոյրս մար-
ասպաններ ենք... Յետոյի...

Սեղանը այս անգամ խփեց առաջ 6, յետոյ 7.

— Մի շնար... Մի գողանար...

— Բաւական է այլ ես, մէջ մտաւ տանուաէրը —
գուրս է գալիս որ Սեդրակը մի հրէշ է...

— Ասացէք խնդրեմ... գոչեց կատաղութեամբ Սեդ-
րակը — մարդ էլ ալդքան խալտառուկ բաներ խօսել
յանգանի... Եկել ենք նոր տարի դիմաւորելու, թէ վի-
րաւորանքներ լսելու...

Եւ անշուշտ կարող էր կռիւ յառաջանալ, որովհե-
տեւ դերասանը գունատ՝ վճռել էր սեղանի ասածներին
միանալ, երբ յանկարծ պատի ժամացոյցը սկսեց կէտ
գիշեր խփել: Մի գղրդիւն լսուեց դրսից: Նոր տարին
սկսում էր. թնդանօթի ձալնն էր:

Տանտէրը, որ կծկուել էր, մի խոր շունչ առաւ:

— Ենորհաւոր նոր տարի... ասաց նրան դատա-
ռորը:

— Այո, այո... մոմոաց տանուտէրը — լաւ ժամա-
նակին հասաւ. հերթը ինձ էր գալիս...

Դերասանը թողեց սեղանը և ելաւ. Ամենքն սկսե-
ցին իրար համբուրել և շնորհաւորել: Տանտիկինը լայն
բաց արաւ ճաշարանի դուռը և գոչեց.

— Համեցէք դիմաւորելու...

Եւ թողեց որ ներս գնալին օրիորդները, Վառոն,
Սեդրակն ու դատաւորը:

Իսկ երբ խօսող և ալժմ անշարժ կեցած սեղանի
առջևից անցնում էին միւսները, դերասանը ժպտուն՝
կանգ առաւ նրա առաջ, ձեռքը ծանրութեամբ դրաւ
վրան և ասաց խորունկ շեշտով.

— Նարունակիր խօսել, սեղան... ի՞նչ կը լինէր թը-
շուառների և կարօտների վիճակը՝ գողերի, բռնաւոր-
ների, կաշառակերների և աւաղակների ճանկերում, եթէ
ճշմարտութեան ոգին լուեցնելուց յետոյ՝ չը խօսէին
գոնէ գլասեղանները...

Ա. ՓԱ.ՓԱ.ԶԵՍԱՆ